

Արտոնագրեր
Ղ. Գ. ՊԱՆԹԱՆԱՆ
Իրավունքի համար տարեկան գինն է 1
սկի օրինակն է : Վեցամսեայ գինն է 3
արծաթ մեծիկի : Եռամսեայ գինն է 2
մեծիկի :
Տոմար տարեկան մի քաղաքայ հա-
մար տարեկան գինն է 6 մեծիկի :
Վեցամսեայ 4 »
Եռամսեայ 3 »
Օտար երկիրներու համար տարե-
կան գինն է 25 ֆրանք :
Բաժանորդագրեր կանխիկ վճարելիս
Բաժանորդագրութեան և ծանուց-
ման համար պէտք է գրով և առ Պ.
Խ. Գրեքանեան, Եօլ Պէտէսթէն, 5 :

ԱՐՇԱՆՅԱՆ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԵՌՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ ԲԶՄԻՐ

Համառոտութիւն — Խմբագիր
Յ. Կ. ՍՎԱՆՏԵԱՆ
Պուրա զրկուածներուն բոլորայի
ծախքը խմբագրութիւնը կը վճարէ :
Չհրատարակուած յօդուածի կամ
նամակի համար խմբագրութիւնը
պատասխանատուութիւն չընդունիր :
Խմբագրութեան զրկուած սր և է-
զրութիւնն ետ չտարուիր :
Հասարակաց օգտակար գրութիւն-
ներ ձրի կը հրատարակուին :
Ծանուցման տողը մէկ անգամի
համար 5 դրու է, երկու անգամի
համար 2 դրու է, երեք անգամի
համար 60 փութա : Երեք անգամէն
աւելի համար սակարկութիւն կը լայն-

Ուղղակի խմբագրութեան վերաբերեալ սրեւէ գրութիւն պէտք է խմբագրին անունին զրկուիլ, Եօլ Պէտէսթէն, 5 :

Օ Ր Ո Ւ Ա Ն Ի Ն Դ Ի Ր ՔՕԼԵՐԱ

Անցած շաբթուան լուրերը, ինչ-
պէս գիտենք ընթերցողը, անտի-
Տիմոթի մէջ ծագած անհետ-
Ստորին եղիպտոսի զանազան կէ-
տէրուն և մանաւանդ Մանուկայի
մէջ մուտ գտած բլլայը կը ծա-
նուցանէին : Պոլսէն հասած հե-
ռագիրներէն իմացուեցաւ թէ Ա.
Է. քանդակիչ և Գաֆուրի մէջ ալ
մուտ գտած էր, սակայն Ջօնսոնի
լրագրին խօսքին նայելով, այս
վերջին քաղաքայ մէջ մեծնող չէ
եղած : Տիմոթի մէջ մեծնողնե-
րուն թիւն է 222, երկու օրուան
մէջ, որոյ 109ը անցեալ հինգ-
շաբթի, և 113ը անցեալ ուր-
բաթ օր : Տիմոթի ոչ — բազմա-
մարդ քաղաք մը բլլայն երևա-
կայելով, ստուգիլ սոսկում կադ-
դէ այս թիւը, և դադարաւ կու-
տայ թէ արդիս ստուգիլին ճա-
րակէր է տարբեր : Մանուկայի մէջ
9 և Բօթի — Մանուկ մեծ 1 հաս-
միայն մեծնող եղած են : Պոլսոյ
Առողջապահական Խորհրդոյ որոշ-
մամբ Եղիպտոսի շուրջին և Կար-
միր ծովէն եկող ամեն նաւ, կամ
Պէրսի մէջ և կամ Իզմիր տան օր
քարանձին պիտի սպասեն, և
արդէն ուրբաթ օր Ալեքսանդրի-
այէն Իզմիր հասնող Առաքելական
Հունգարիա շոգենաւը Բլազովն
կղզին ուղղուեցաւ տասնօրեայ օ-
րինական քարանձին անցունե-
լու համար : Հունգարիա գտնուող
ճամբորդներուն թիւն է 93, որոյ
առողջութիւնը կատարեալ է բա-
րեալագարար :

Տարտանքէն երէկ Պ. Պ. . . Ի
կողմէ համող մանուկ հեռա-
գիր մը կ'իմացունէ, թէ անցեալ
երկուշաբթի Իզմիրէն Պոլսի ուղե-
որդ Ռուսական շոգենաւը, որու
մէջ կը գտնուէր նաև Պ. Պ. . . ,
Տարտանքի մէջ 24 ժամ քարան-
ձին քնել ստիպուէր է : Յիշեալ
շոգենաւը Ալեքսանդրիայէն Իզմիր
հասած էր թէկ, բայց մեր նաւա-
հանգիստն հասած ատեն տակա-
ւին քօթերայի մասին հեռագիր
ընդունուած չբլլալով, ճամբան
գտնուած ատեն հրաման կ'երթայ
Տարտանքէ 24 ժամ կեցունելու :
24 ժամէ ետեւ շոգենաւը կ'ուղ-
ղուի դէպի Պոլսի, բայց, մինչև
հասնելը, բարեկարգ կրկին ստա-
կանալ, ուստի երբ կը հասնի Պո-
լսի, կրկին ետ կը զրկուի անմիջա-
պէս, տան օր Տարտանքի մէջ
օրինական քարանձին անցունե-
լու համար :

Դարձեալ, Պոլսոյ Առողջապահա-
կան Խորհրդոյ կ'իմացունէ քա-

ղաքի իշխանութեանց, թէ Կիւ-
րոսէն և Մայթայէն համող նա-
ւերը եղիպտոսէն հասնող նաւուց
նման միեւնոյն քարանձին ան-
ցունել կը պարտաւորին : Պէտք է
որ կամ Պէրսի կամ Իզմիր քա-
րանձին անցնէ 10—15 օր : Ու-
րիշ սրեւէ նաւահանգիստ մանեւ
արգելուած է բոլորովին : Երկրորդ
հեռագիր մը կը յայտարարէ ասոր,
իմացնող թէ Մայթայի համար
ձեռք առնուած միջոցը ջնջուած է
քանի որ այս կղզին 21 օր քարան-
ձին արշաւ է եղիպտոսէն հա-
նող նաւերուն համար : Վերջապէս
երկրորդ հեռագիր մ'ալ կը հրամայէ
թէ սրեւէ նաւի մը բոլոր ճամբորդ-
ները, որ յոտակ և յայտնի անցա-
գիր մը չունին, պէտք է որ քա-
րանձին անցունեն Բլազովնի
մէջ : Ամենին խտրութիւն չպիտի
բլլայ առաջին, երկրորդ և երրորդ
բաժնի ունեցող անցողիներուն մէջ,
քարանձին անցունելու համար մա-
սին :

Մանչի թունելին խնդրով զբա-
ղող Անգլիական յանձնախումբը,
իր վերջին նիստին մէջ լրտա վոյ-
սիլին լսեց : Եղիպտոսի Բրիտանա-
կան զօրաց նախորդ հրամանա-
տարը, Բէն-Մարիտի դուքսին կարծե-
աւ ըստ իրենց համաձայն խօսե-
ցաւ, այսինքն թէ Թունելին չի-
նուելու կրնայ վտանգի աղբիւր
մը բլլալ Անգլիոյ համար, և թէ
չինուելու ետեւ ահագին ծախսի
դուռ մը պիտի բանայ, Տուրի
զօրութիւնները շտապունելու, և
հոն առաջին կարգի բերդ մը կանգ-
նելու համար :

Յանձնախումբը լսեցնաւ գնդա-
պետ Մաճէնտի, որ պայթուցիկ
նիւթոյ ընդհանուր վերատեսուէր է :
Պ. Մաճէնտի յայտնեց, թէ
մանրագրին աշխատութեան մը
չնորհիւ հաստատուեցաւ թէ կա-
րելի պիտի բլլայ Մանչի թունելը
պայթուցանել այնպիսի եղանակաւ
մը, որ ընդծովեայ ուղիին բոլոր
չինութիւնը պիտի կրնան քարու-
քանդ դառնալ մէկ պայթումով :
Միակ դժուարութիւնն է, յա-
րեց գնդապետ Մաճէնտի, այս-
պիսի կարիւր չինութիւն մը պայ-
թուցանելու չը վտանգող անձեր
գտնել :

Անգլիոյ Հասարակայ Խորհրդա-
րանի խնդրագիր մը տրուեցաւ,
անցեալ շաբթու, 500,000 ստե-
րագրութեամբ, կերակի և տօն
օրերը գինեատանց բոլորովին դո-
ուիլը խնդրելով : Այս խնդրագիրը
1,400 մեթրօ երկայնութեամբ
թուղթի ահագին ծրար մ'էր և

կը կը հարկու ռիթմուն քեր-
կամ :
Թիֆլիզէն կը գրեն թէ, կըսէ
Էքսպրէս, Հայ և ուրիշ լազիկներ
որք Կովկասի մէջ կը հրատարակ-
ուին, խիստ պատուէր ընդունե-
ցին, չհրատարակել տակնին Օս-
մանեան կառավարութեան կամ
ուրիշ որ և է բարեկամ և գրա-
ցի ահարկեան մը դպչող յօդ-
ուածներ :

Մանուկ նամակներ կ'իմացը-
նեն թէ, Վանայ Ռուսական հիւ-
պտոս Պ. Կամարական ետ կոչ-
ուեցաւ, առաջին կառավարչին
գանդատանց վրայ, որք հա-
ղորդուեցան Ռուս կառավարու-
թեան, Բէթէրգալուրի Օսմանեան
գեղական Շաքիր բաշայի միջոցաւ :

Ալեքսանդրիոյ մէջ, Էմբարսիալ
տ'Ալեքսանդրի անունով լրագիր
մը հրատարակուելու սկսած է :
Մօտերս խտրելէն, յոռաբէն նոր
լրագիր մ'ալ պիտի հրատարակուի-
լու թիւնը, ծովային զօրութիւն
չունենալուն համար, ծովային
զօրծոյ պաշտօնէութիւն ալ չունի-
թիւ հէրանի լրագիրները կրնեն թէ
Պատրայի ծովածոցին մէջ մարդկու
որստող նաւերուն պահպանու-
թեան համար Շահ օրոշած է եր-
կու մեծ նաւեր գնել, և ասոր
համար ծովային զօրծոյ պաշտ-
նէութիւն մը կարգել որոյ համար
արգէն ընտրուած է պաշտօնեան :

Ալեքսանդրիոյ մէջ հրատարակ-
ուող Օմնիսիա լրագրին պատմաբն
համեմատ, Ստորին — Եղիպտոսի
մէջ ծագած կենդանեաց հիւան-
դութիւնը երթալով սաստկանալու
վրայ է, սակայն տեղական իշխա-
նութիւնը Աստուծոյ կողմէ հասած
աղէտ մը համարելով այս, ամե-
նին միջոց մը ձեռք չեն առած
ախտին ճարակման դէմ :

Կըսուի թէ Վենետիկի ծովածո-
ցին մէջ գտնուող Անգլիական նա-
ւատորմը Իզմիր պիտի գայ : Սոյն
նաւատորմին հրամանատարն է Ա.
միրալ — Հայ ծովակալը :

Օսմանեան կառավարութեան մէկ
որոշումին համեմատ, օսմանեան
գրօշակ կրող նաւերէն, անգլիա-
կան Թօնոյի հաշուով տուրք պի-
տի առնուի : Այս մասին Կ. Պոլսոյ
վաճառականական Սենատը, Առև-
տրական պաշտօնէութիւնն ու նա-
ւահանգստի վարչութիւնը պիտի
խորհրդակցին :

ԳԱՆԱԳԱՆՆ ՎԻՃԱԿ

Թէև ընդհանուր խաղաղութիւ-
նը ապահով կ'երևի Եւրոպայի մէջ,
բայց աս խաղաղութիւնը Եւրոպայ-
էն դուրս գտնուող աղքատ և տե-
րութեանց ոչ նուազ մտատանջու-
թեան տեղի տուած է : Չինաս-
տան, Եւրոպական ազգի մը հետ
մօտաւոր ընդհարման մը դէմ առ-
դէմ կը կարծէ ինքզինքը, և պա-
տերազմի պատրաստութիւններ կը-
նէ, Ամերիկայի մէջ պէտք եղածը
գնելով : Եթէ Փրանսայի հետ ուղ-
ղակի պատերազմ մ'ալ չունե-
նայ Երկնային — Պետութիւնը, շատ
անհաճոյ կողմեր պիտի տեսնէ՝ ա-
ռաջնոյն Թոնքինի մէջ մանկէն,
Փրանսա 10—12 տարուան յոյսէ
մը ետեւ, տեսաւ որ, ալ յնոր մ'էր
այսուհետեւ Եւրոպայի մէջ երա-
զել այն փառքն ու աղքատութիւ-
նը՝ զոր ունէր պատերազմէն ա-
ռաջ : Համոզուեցաւ, որ վերջին
կուռնի մէջ կորուսած տեղերը, և
Եւրոպական ցամաքին վրայ ուրիշ
դիտողութեամբ դարձնականա-
մեծութեան անկեց աչքը, յօրե-
նակ իր գրացի մեծ տէրութեան
մը : Հեռու երկիրներ, ինչպէս
Մատակասկար և Թոնքին, այսօր
Գաղղիոյ արտաքին քաղաքակա-
նութեան գլխաւոր առարկաներն
են, և իր այս ձեռնարկութեանց
մէջ, համադրուած էր որ, ուրիշ
տէրութիւններ չէզոք պիտի մը-
նային : Հասարակապետութեան
այս ընթացքէն, թէև չենք կրնար
հետևել, թէ բոլորովին ջնջուած
է Գաղղիոյ ազգին՝ Գերմանիոյ դէմ
տածած վրէժխնդրութեան ոգին,
սակայն դիւրին է տեսնել, որ այս
նոր ձեռնարկութեամբ, այդ կո-
րուստին ցաւը մոռնալէ դատ, ը-
րած թէ հողային և թէ գանձային
փնտնելուն տասնապատիկ պիտի
չաճի : Աս յոյսը եթէ վաղուց
չունենար, և եթէ ապահով չբլ-
լար իր յոտով մէջ, երկրակալու-
թեանց համար յատուկ զօրաւա-
նակ մը կողմէ չէր ձեռնարկէր
անշուշտ, որոյ համար եղած և
բլլալիք ծախք կրնայ դուշակուիլ
թէ սրբան մեծ պիտի բլլայ : Ար-
դէն անցեալ շաբթուան արձանա-
գրութիւնը ցոյցեցին թէ, Ռուսիա
հաւանութիւն տուած է Փրանսայի
այս նպատակին, և կասկած չկայ
որ, միւս բոլոր տէրութիւններն ալ
Ռուսիոյ օրինակին հետեւին, այս-
ինքն հաւանին կամ բերանացի
կամ լուսնային և Երկնային, քանի
որ այդ պիտի ընթաց մը իրենց
ուղղակի կամ անուղղակի շահուց
չլինասէլէ դատ, իրենք ալ, կրնայ
բլլալ որ, վաղը տասնիկ ձեռնար-
կութիւն մը ընեն : Աղքատին և

կառավարութեան պաշտպանու-
թեան համար, ամեն տէրութիւն
այս քան ահագին պատրաստու-
թիւններ և անթիւ ծախքեր կ'ընէ,
սակայն ոչ ոք կը համարձակի միւսին
վրայ յարձակելու, բոլորն ալ դը-
րէթէ ինքզինքին պաշտպանելու
նպատակով կ'ընեն այդ պատրաս-
տութիւնները : Եւ իրօք հեռու
տեղերու երկրակալութեանց դո-
ժին մէջ, փոխանակ ընդունայն
ծախքեր և արհեստագործիւն աչքի
առնելով՝ զիրար ջարդելու, աղ-
քէն բլլալ միթէ, երբ օտար տե-
ղեր գտնուած այդ օրերը իրա-
րու մէջ բաժնուին : Սա՛ Մատա-
կասկարը, նա՛ Թոնքինը, միւսը
Չուլուստանը, վերապէս մէկ ու-
րիշ մը այս կամ այն կէս — բար-
բարիկ երկիրը գրաւելով, թէ քա-
ղաքակրթութեան համայն աշխար-
հի մէջ տարածուելուն և թէ մարդ-
կութեան ապագային բարեկաւու-
թեան օգտած պիտի բլլան, և
անցնող իրաւունք անմիջական աւան-
դանք :

Եթէ երբեմն քաղաքական խըն-
դիրներն ու պատահարք վայր-
կեան մ'ալ փրկստիպական տե-
սակցաւով ընեն ոք, մարդկային
ընկերութեան համար ճակատագ-
րային կամ նախախառնական
գաղտնիք մը տեսնել չկրնար ար-
գելիլ ինքզինքը : Եւ իրօք, Գաղ-
ղիոյ վերջին պատրաստութիւնը, ա-
հագին փոփոխութեան մը տեղի
տուտ աղքատ կացութեան : Պա-
տերազմին բաղդը եթէ Գաղղիոյ
մպտէր, ո՛վ կը կասկածէր, որ
այսօր Փրանսա Եւրոպական ցա-
մաքին վրայ գտնուող տէրու-
թեանց անանկալը չէր բլլար, և
այն ատեն բնաւ միտքէն չպիտի
անցնէր հեռաւոր երկրակալու-
թիւններ ընելու, որք ոչ միայն
իրեն, այլ բոլոր աշխարհի համար
օգտակար կրնան համարուիլ : Բը-
նական հրատարակութեանց աղբիւր-
ներ են տոնքը, որք վաղը պիտի
հոսին ամբողջ աշխարհի ճարակին :
Հնդկաստան, ոչ միայն Անգլիոյ
այլ ամեն երկրի համար բացած է
իր ծոցը, և ո՛վ կրնայ կասկածիլ,
թէ Մատակասկար կամ Թոնքին
քաղաքակրթիւն և աղատ երկիրներ
և հարստութեան մէջմէկ հանքեր
չպիտի բլլան : Նոյնպէս, ո՛վ կրնայ
կասկածիլ, թէ վաղն ալ ուրիշ
տէրութիւն մը չպիտի ձեռնարկէ
այսինչ կողմի այնինչ կղզիներ գը-
րաւման : Այսպէս ուրեմն, տե-
րութիւնը իրենց այժմ ու ուղք ուլ-
կանալի կամ անուղղակի շահուց
կէս երաշխաւորութիւն մը կուտան
միջազգային յարաբերութեանց
խողաղ տեղականութեան :

— 200 —

ւեաման, Ծննդեան, Խաչկերթեան
և Յարութեան: Քանի մը հարիւր
տարւան հնութիւնը: Հնախոյ
մը Երզնկա երթալով և եկեղեցի-
ւոյն մէջ տեսնելով, հիւսիս, եր-
կուքը դնելով, Իզմիր տարեր, և
անտի Եւրոպա գրեթէ է. ապա եւ-
րոպայէն միւս երկուքն ալ ուղ-
ուած ըլլալով գարձեալ երջնիկա
գացեր և Քիւրտեանը հաճեցու-
նելով՝ դանտը ալ գնել տարեր է:
Ժողովուրդը այն պատկերները
ըստ սովորութեան որոշեալ օրերը
չտեսնելով՝ երբ կը յուզուի, և երբ
յիշեալ Քիւրտեանի կը հարցուն,
չտեսնա՞ր, վաճառեցի, կըսէ, և
Ա՛յ լիւրայի գումար մը կը ցուցնէ՝
իբր այդ չորս պատկերն իփսա-
րէն առնուած: Ժողովուրդը կը
զայրանայ, յուզմունքը կ'աւելնայ,
և աւելցոյն Քաղաքական ժողովն
լրելով որ գնդին Իզմիր կը գտնուի,
առ Վեր: Առաջնորդն կը գրէ և
կը խնդրէ ետ առնուլ պատկեր-
ներն, սակայն գնդին կը պատառ-
խանէ, թէ Եւրոպա գրեթէ են,
և պէտք է Եւրոպայէն արդի տե-
րէն գնել: Այս պատմութիւնը մեզ
հասած է հաւատարմորէն աղբիւրէ
մը: Անշուշտ մինչև ցարդ լրած է
նաև Երզնկայի Առաջնորդ Վեր: Տ.
Հմայեակ արագան. անշուշտ փու-
թայած է ամեն միջոց ի գործ գը-
նել՝ պատկերները ետ գարձուե-
լու համար: Այդ թաղականին,
այդ Քիւրտեանին բոլոր ստաց-
ուածքը, բոլոր դոյնն ու կոյրքը
վաճառել տալու և գրաւելու է:
Բայց բաւական չէ այս. որովհետեւ
մեր տեղեկութեանց նայելով, թէ և
հնարին չէ գին որոշել պատկերայ
համար, սակայն առ նուազն 40
հազար լիրա կարծեն եղեր. այս,
բաւական չէ Քիւրտեանի ունեցա-
ծը վաճառել գրաւել, այլ նաև
իրեն դոյն, իրեն սեղանակապետ
խայտառակելու, և կառավարու-
թեան ամենախիտ պատժոյ են-
թարկելու է: Մենչև այս աստի-
ճան վատանալ, մինչև այս աստի-
ճան անձնական չափու ծառայել,
միթէ երբեք ներքի է: Քաղա-
քակիրթ ազգեր իրենց ամենաու-
նիշ մէկ հնութիւնն իսկ մեծաւ
խնամով կը պահեն, բայց այդ

Քիւրտեանը՝ իւր պաշտօնը չարա-
չար ի կիր աշխատելով, գաղա-
զօյի կը վաճառէ չորս ամենագե-
ղեցիկ և բազմադարեան պատկեր-
ներ: Հարկաւ քանի մը հարիւր
լիրայ առած է, և զայն իսկ չը
ցուցներ, և միայն Ա՛յ լիւր երևան
կը գնէ: Ըստ լրագրական սովո-
րութեան, Պատրիարքարանի ա-
մենախորին ուշադրութիւնն ալ կը
հրախրեմը այս ամենածանր սե-
ղանակապետութեան վրայ: Արմատ,
Էր կերթանք:

(Փունջ)

Թէրֆէմանի պատմութիւնն նայե-
լով, Թիֆլիզի մէջ տարածայնու-
թիւն մը եղեր է, թէ Ռուս կա-
ռավարութիւնը Էլմիսիմի վանքը
մտնելով խուզարկութիւններ ընել
ուզած է, բայց եպիսկոպոսներն
մին պատասխանէր է թէ «տան
տէրը հոս չէ, հիւր է՛նք, կընար
ընդունիլ, եթէ բռնի մտնել ուզէք
ձեր գիտնալու բանն է եւայլն»: Ու
Ռուսական կանոնի համեմատ տուն
մը խուզարկելու ատեն, տան տի-
րոջ և ուրիշ երկու վկայից ներ-
կայութիւնը հարկաւոր ըլլալուն
պատճառաւ վանքը խուզարկելու
գիտաւորութիւնէ ետ կեցեր են:

Երևանի գործերը միևնույն վի-
ճակն ունին, կրէն յիշեալ թերթը
երիտասարդ Մըհմեդեանց գեւ. բան-
տին գաղանի մէկ խորը կը պահ-
ուի, և հազարդակցութեան արգիւ-
ւած է բարբոթին: Մըհմեդեանց
յանցանքն է Բրաթսկովի մը սպ-
տակ մը զարկելը, երբ ուս Արմատ-
կա» (չուն Հայ) կոչած է զանի:
Մըհմեդեանցի ձեռքակալութեան
հետեւեալ օրը 5000 ռուպլի երաշ-
խաւորութիւն արեւելով, բանտար-
կեալը առժամանակեայ կ'արձակ-
ուի, մինչև դատին սիսուիք: Բայց
կասկած ըլլալով թէ հայերը գաղա-
նի սխալով մը ունին, քանի որ
Մըհմեդեանցի բռնուած օրը, կիրա-
կի, խանութ կային գոյ ըլլալով
հանդերձ անմիջապէս կըցեր են
այդքան գումար մը հաւաքել,
ուստի կրկին կը ձեռքարկուին, և
այս անգամ աւելի խտտօրէն կը-
վարուին անոր հետ:

Տարածայնութիւն մ'ալ ելաւ

Թիֆլիզի մէջ թէ, տորթոր Լէոն
Տիգրանեանց աներեւոյթ եղած է,
բայց անտույգ է այս լուրը: Տիգ-
րանեանց բանն երթալով Մըհմե-
դեանցի ճակատն համբուրէր է,
ուստի բրաթսկովի ձեռքը երկուս
սարդի մը այսքան համակրութիւն
ցուցուիլը, քաղաքական ցոյցեր
նկատուիլը են:

Երբ Պարոն Ռուբէն Զալալեանցի
հարցուէր է, թէ «Արմատեան»
բառն ինչ գէշ նշանակութիւն կըր-
նայ ունենալ, որ Մըհմեդեանց բը-
րաթսկովի ձեռքը կ'ըլլէ, Զա-
լալեանց պատասխանէր է թէ «ես
կըմտեցունէի բրաթսկովի եթէ ին-
ժի ուզեցիք ըլլալ Արմատեան բա-
ռը»: Այս պատասխանը վերջին
ծայր յանդգնութիւն կը կարծուի
Թիֆլիզի մէջ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Պատերազմական գործոց պաշ-
տօնէութիւնը, բանակին համար
զգուստ և պաշար կը գնէ մեծ
թիւով:

Մէրվըր բաշայի առաջարկու-
թեան վրայ, Օսմանեան կառավա-
րութիւնն արտօնութիւն ստացաւ
Ռուսիոյ մէջ 43,000 ձի գնել կայ-
սերական բանակին համար:

Վրացի լրագրիչը կը ծանու-
ցանեն, թէ Թեոսիոյ 200 Տաճիկ
ընտանիք, յունական նաւով մը
գաղթած են Ասպիոյ կողմերը:

Մէլանիկի զինուորական հրա-
մանատարին կողմէն, զինուորա-
կան պաշտօնէութեան հասած հե-
ռագրի մը կ'իմացնէ թէ, յաջողէր
են համաւաւոր աւազակապետ
գաղթեան Բամաքայի ձեռքէն ա-
զատել Վախիլի անուն անձը, որ
բռնուած էր Վերմիրի ազարակին
մէջ է Յիշեալ հեռագիրը կը յաւե-
լու նաև թէ Քաթաքայի աւազա-
կաց խումբը անգաղաք հաղածուե-
լու վրայ է:

Մանձուց պաշտօնէութեան մէկ
չըջաբերական գիրը տեղեկութիւն
կուտայ պետութեան ամբողջ դա-
ւառաց կառավարիչներուն, թէ
Պետական Ժողովոյ նոր մէկ որոշ-
ման համեմատ, Էնկիւրիէն այժ
գտուր չհանելու հրամանը կրկնու-
ած է, որպէս զի օտար երկիրներ-

րու մէջ նոյն ցեղի այժերը չբազ-
մադատին, որն որ քննասիրար է
թէ տեղութեան և թէ մասնաւոր-
բայ շահուն: Յիշեալ չըջաբերա-
կանը կըսէ նաև, թէ Պետական
Ժողովը հաւանութիւն չէ տուած
այժերուն համար եղած տարեկան
տուրքի նուազման: Այս տուրքը,
որ առաջ իւրաքանչիւր այժի հա-
մար 6 յը. 20 բարա էր, յետոյ 4
յը. 20 բարայի իջաւ, և հետեւա-
բար հարկ չ'կար նոր դեղ մը բ-
նելու:

Պոլսոյ գաղթականաց յանձ-
նաժողովը անգաղաք կերպով գրա-
ղած է, գաղթականներուն բնա-
կութեան տեղերը որոշելով:
Մայիսի սկիզբէն մինչև ներկայ
ամսոյ 5, Պոլսի համառոտ գաղթա-
կանաց թիւը 4046 հոգիի կը հաւ-
նի: Միևնոյն միջոցի մէջ 1324
հոգի զրկուեցան Պրուսա, 2086
Պալքէսէր, 443 Իզմիր, 82 Հա-
լէպ, և 272 Սեբաստիա:

ՍՈՒՆԻՅ ՃԷՎՈՆՍԻ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Աւերեք Բաշէ - Կը հարաւորան

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ ՓՈԽՊԵՆԻ Է

Փոխադրելի բնակիչ կ'իմանանք
այն իբր որ կրնայ անձէ մը՝ ուրիշ
անձի մը անցնել: Կան իրեր որ
ինքնին կրնան ձեռքէ ձեռք անց-
նել, ինչպէս Ժամացոյց մը, գիրք
մը և այլն: Կան իրեր ալ, որ գի-
րով կամ օրինակն ստացուածով
կրնան փոխանցել, ինչպէս են տուն,
հող, և այլն:

Ծառայութիւններն ու կրնան
փոխադրել, ինչպէս երբ ծառայ մը
սիրով մը կըլարձուի: Երաժիշտ մը,
քարոզիչ մը նմանապէս իրենց ծա-
ռայութիւնը կը փոխադրեն երբ
ունենալը չափ մը ունին զանոնք
լրած ատեն: Սակայն կան շատ
օգտակար իրեր ալ որ չեն կրնար
մէկէ մը առ ուրիշ փոխադրել:
Հարուստ անձ մը կրնայ սպասաւոր
մը վարձել, բայց չկրնար անոր ա-
ռողջութիւնը գնել, կրնայ ընտիր
բժշկիներու օգնութիւնը վարձել,
սակայն երբ իր ծառայութիւնները
յաջողին անոր առողջութիւնը վե-
րահաստատել, ալ յոյս չմնար:

Նոյնպէս, անկարելի իրապէս գնել
կամ ծախել ազգականաց սէրը,
բարեկամաց յարգը, բարի խղճի
մը երջանկութիւնը և հարստութիւն-
նը կրնայ շատ բաներ ընել, բայց
չկրնար ոսկիէն և անգամանակէն
թանկագին եղող այս գոյքերը ա-
յաջողել: Տնտեսագիտութիւնը
չըզբաղի երջանկութեան բոլոր
պատճառները և այս բարոյական
հարստութիւնները քննելով որք
կարելի չեն ոչ գնուիլ, ոչ ծախուիլ, և
նիւթական հարստութեան հետ
յարաբերութիւն չունին: Աղքատ
մը՝ որ բարի խղճ, անձնուէր բաւ-
րեկամներ և բնախոր առողջութիւն
մը ունի, կրնայ արդարեւ աւելի
երջանիկ ըլլալ, քան այն հարուս-
տը որ զուրկ է այս օրհնութիւն-

ներէն: Բայց, միւս կողմէն մարդ
մը պէտք չունի ամենին կորսն-
ցնել խղճին խաղաղութիւնը և եր-
ջանկութեան միւս աղբիւրները՝
հարստութիւն ստանալով և բոլոր
շահեկան զբաղումները վայելելով:

Ըսել է որ, հարստութիւնը միակ
բարի բանը չէ, և սակայն լաւ է
քանի որ կըխնայէ զմեզ ստանալի

աշխատութիւններէ և կարօտու-
թեան երկուքէ, նաև միջոց կու-
տայ մեզի հաճելի իրեր և փոխա-
դրելի ծառայութիւններ ստանալու:

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՄԱՆ ՈՒ-
ՆԻ ԻՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

Երկրորդ, իրերը չեն կրնար հա-
րստութիւն կոչուիլ երբ քանակու-
թեան մէջ սահման մը չունին:
Եթէ մեր ցանկացած բանէն ուղած-
նաւ չափ ունեցած ենք, ալ չենք փա-
ւերի անկէ ունենալ: Այսպէս,
օգը որ մեզի կը շրջապատէ, հասա-
րակ պարագայից մէջ եղած հա-
րստութեանց չմանկի, բաւական
է որ բերաննիս բանանք, պէտք
եղածին չափ չնշառելով անկէ կը-
լանելու համար: Աս վայրկեանիս
մեր շնաւած օգը չափազանց օգ-
տակար է, վաճառի մեր կեանքը
կըմտեցանէ, սակայն սովորաբար
բան մը չենք վճարող զայն գործա-
ծելու համար, որովհետեւ բոլոր
աշխարհի բաւելու չափ կայ: Բայց
խոր մետաղահանքի մը մէջ օգին
քանակութիւնը կըսահմանի, և այն
ատեն կրնայ հարստութիւն կոչուիլ
այդ օգը: Եթէ Մանչի Թունէլը
չիմուէր, ահագին գործ մը պիտի
ըլլայ շնառութեան համար կարեւոր
եղած օգն ստանալ հոն:

Միւս կողմէ, անգամանակները
թանկագին ըլլալով հանդերձ շատ
քիչ բանի կը գործածուին, գեղա-
տեսի լիւր կը կազմեն, ապակի
կը կտրեն կամ Ժայռը կը ծակեն:
Իրենց հարուստները ըլլալն է մա-
նաւոր որ մեծ յարգ և սուղ գին
ունին: Բնականաբար լոկ հազուա-
գիտութիւնը չէ որ արժէք կը
ստեղծէ: Կան շատ մետաղներ ու
բոյսեր խիտ քիչ քանակութեամբ
ստացուած են, սակայն գիններն
միշտ աժան մնացած են, և պիտի
մնայ մինչև այն օրը, ուր գուցէ
մասնաւոր գործածութեան մը վի-
ճակուն: Իրիտիւր ըսուած նիւ-
թը խիտ բարձր գինով կը ծախուի,
որովհետեւ ոսկիէ գրեթէ բոլորն
չենք և կը գործածուի և զոր խիտ
քիչ քանակութեամբ կարելի է
ստանալ:

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ ՕԳՏԱԿԱՐ Է

Երրորդ, կրնանք բնէ գերուե-
թեամբ, թէ ինչ որ հարստութեան
մէկ մասը կը կազմէ, պէտք է որ
օգտակար ըլլայ, կամ օգուտ ու-
նենայ, այսինքն կարենայ գործա-
ծուիլ բանի մը, կամ՝ որեւէ կեր-
պով հաճելի և փափաքելի ըլլայ:
Սենիօր իրաւամբ ըսած է թէ,
օգտակար իրերն անոնք են՝ որ
ուղղակի կամ անուղղակի կերպով
նաճոյք կ'արդարեն եւ ցաւ կար-
գիլն: Աղէկ լարուած և աղէկ
երգուած նուագարան մը հաճոյք
կ'արդէ, չափով տրուած դեղ մը
պէտք ունեցողին ցաւ կ'արգիլէ,
սակայն շատ հեղ զգուար է որո-
շել թէ իր մը հաճոյցը առաւ-
ելութիւն թէ ոչ ցաւոյ նուազում
կըրերէ մաղ: Ճաշ մը՝ անօթութեան
ցաւէն կ'արգիլէ մեղի և հաճոյք
կուտայ բնախոր բաներ ուտելու:
Օգուտ կ'աւելնայ կամ՝ ցաւը կը
նուազի և, անտեսագիտութեան
մէջ, հաճոյցը բնութեան այնչափ
փայլ չըլլալը:

Պէտք չունինք ճշդել թէ, ի-
րերը ուղղակի հաճոյք կ'արարա-
րեն, ինչպէս հազուադէպ կը
կրննք, թէ անուղղակի, ինչպէս
այն մեղքներն որք այդ հա-
զուադ շինուելու կը գործած-
ուին: Նիւթերը անուղղակի կը

— Ի՞նչպէս:
— Պարոնին գտնուած սրտին կից
սենեակն սպասելով, ուսկէ զիւրին է
առնիլ լաւ լսել:

— Երբ:
— Հիմա:

Նախընթաց զվարէն մէջ նշանակուած
միջին գատիկոնի սանդուխն ի փար գըլ-
տորով մեծ բանի մը ահաւոր ծայրը
մեր Աղորոշեան սիրահարներու տե-
սակցութիւնն արգիլեց:

Երկուքն ալ ահաւորով նստի կան-
թեղ մարցին և յետոյ ոտնի մատն-
բուն վրայ շտապաւ քայլելով դուրս ե-
լան: Ընդարձակ սրահը վաղեցին ուր
սանդուխն առնէ չորս անձերու խմբ-
եակ մը կար, ասոնցմէ երեքն արդէն
ծանօթ են ընթերցողին, այսինքն պա-
րոն և տիկին Անատոլ և տէր Քոչա-
տիս, իսկ չորրորդը գրեթէ քսան ու
հինգ տարեկան երիտասարդ մէկը որ
որդեկիւրայ առ խմբի նման կըմտնէր:
և իբրեւ զիւր հարկ հետեւեալ խօսքերը
կարտասանէր պարզապէս:

— Եկէք, եկէք, խօսք հասկցուցեք
ձեր աղջկին: . . . Իրիկուանէ ի վեր
կաշխատիմ զինքը համոզելու . . . կա-
ղաչեմ, կըպաղատիմ որ պարահանդէս
երթանք, և չ'ուզենք . . . գամշեաները
դեռ այսօր թերեւ տուր և զուր տեղը
պիտի յայտնենք . . . ես կ'ուզեմ որ
կնիկս գլուխը դրուին և պարեկով լի-
նան . . . Եկէք, շատ քիչ, համոզե-
մէք զինքը . . . նա իմ խօսքս ամենին

բանի տեղ չ'գնենք . . . բայց ես խնդ-
րեմ . . . ես հիմա շատ աղէկ եմ . . .
Աստուած վրայ շատ աղէկ պիտի հո-
գամ զինքը . . . չ'պիտի թողում որ
շատ պարելով յոգնի . . . Եթէ չ'ուզէ
իսկ ինձի հետ պարել, հոգ չէ . . .

խօսք կուտամ, կերպուած, շատ խնդ-
րեմ ըլլամ հոն . . . Եթէ երբեմն հի-
ւանդ կ'ըլլամ, եթէ չ'ըլլան կերպներ,
կ'երգում որ յանգանք իմ չէ . . .
հայրս գէշ հիւանդութիւն մը ունի . . .
զեր, ամենամաշուր մարդ չէ եղեր . . .
բժիշկները վկայեցին այս բանը . . . և
ես ասոնց մէկ խորհուրդին գաղտնի
ունենդիր եղայ և ակնհայտօրէն լսեցի
որ կ'ըսէին թէ՛ իմ ծրարին տկարու-
թիւնն՝ հոս այն փափմար հիւանդու-
թեան հետեւանքն ու ժառանգութիւնն
է . . . Ինչ ընեմ . . . յանգանք իմ
չէ . . .

Եւ Ռուբինեան՝ այս էր սանդուխն
վար գլուխը երիտասարդը, սոյն խոս-
քերուն հետ գլուխը կըծեմէր ու մա-
ղբը կըբաշէր:

Թատրերգութեան միւս դերասան-
ները՝ Ռուբինեանը բռնեցին ու հան-
գարտեցուցին խօստանալով որ ան-
պատճառ իր կնիք հետ պարահանդէս
պիտի երթայ:

Բայց, ինչպէ՞ս պիտի համոզուի զին-
քը . . . նա ձեզ ալ մտիկ չ'ընէր . . .
ա՛հ, եթէ Երուսաղէմ, այն աղին երիտա-
սարդը հոս լինէր հիմա . . . արդեօր
թատրոնէն չ'գարձաւ գեւ . . .

— Այո՛, աղէկ ըսիր որդեակ, պա-
տասանեց տէր Նիգատիս, եթէ Ե.

— Համարա՞ր է պարոն, ըսաւ Վոս-
տանդ Ռուբինեանի, երուանդ հոս է
իր սենեակը կըլսեմ:

— Արեւմտի ինչ կեցեր եմ . . . Երթամ
զինքը գտնելու . . . և հայրե Ռուբին-
եան քայլ մը առած էր դէպ ի ետ, և
ահա Երուսաղէմ տիրալիր, խոհուն և
ծանր կերպարանով իր գէժ կայնած
տեսաւ:

— Ահ, սիրելի պարոնս գուցէ Ռու-
բինեան ուրախութեամբ, նորաւոր ե-
րիտասարդին լանջը փարելով, ազնիւ
պարոն, դուս միայն կարող ես իմ փա-
փաքս կատարելու . . . գուցէ ես իմ
վերջին և միակ յոյսս . . . վերջապէս
բեզմէ զատ և ոչ մէկը կընայ խեղճ կը-
նիկիս արտօնուած րիթմիւրով վրայ ծախ-
մը չըջեցնելու . . . Եկուր ուրեմն . . . կա-
ղաչեմ, այս գիշը միտադ պարահան-
դէս երթանք, բայց սա պայմանով որ
կնիկս դուս պիտի համոզես . . .

— Այո՛, այո՛, գուցէին միարեան Պ-
և տիկին Անատոլ և ասոնց քահանան,
Երուսաղէմ տրուած իրենց փարտելու,
Ռուբինեանն հանդարտեցնելու և իրենց
զարմուտքս խորհրդակցելու բարե-
պատեհ առիթ մը համարելով պարա-
հանդէս գնալ:

— Այո, Երուսաղէմ դուս պէտք ես
կատարել այս ամենը . . .

Շարքի ընդ հուռոյ

